ԴԱՍ 10.
Աստծո հայրությունը

Ներածություն
Բանալի համարներ
ՄԱՍ 10. 1 Հայր Աստված
ՄԱՍ 10. 2 Աստծուն որպես Հայր ճանաչելու միջոցները
ՄԱՍ 10. 3 Աստված մեր կատարյալ Հայրն է
ՄԱՍ 10. 4 Աստծո անունները Հին Կտակարանում
ՄԱՍ 10. 5 Աստծո հայրությունը աշակերտության հիմքն է
ՄԱՍ 10. 6 Մեր երկնավոր Հոր սերը
ՄԱՍ 10. 7 Հաղորդակցություն Հայր Աստծո հետ
ՄԱՍ 10. 8 Հայր–որդի փոխհարաբերության օրինությունները
Եզրակացություն
Ամփոփում և կիրառություն
Աստվածաշնչյան ուսումնասիրություն
Հնազանդություն

Նշումների համար

Ներածություն

Մենք կարող ենք Աստծուն համարել *մեր Հայրը*, որովհետև մենք որդեգրված ենք Իր ընտանիքի մեջ որպես Իր որդիներ: Նրա հայրությունը հիմնականում բացահայտված է Նոր Կտակարանում: Հին Կտակարանում Աստված որպես հայր նշվում է 15 անգամ, իսկ Նոր Կտակարանում 254 անգամ: Հունարենում ***Հայր*** բառը ***փաղրրն*** է, որը նշանակում է *կերակրող, պաշտպանող* և *խրախուսող*:

Աստվածաշնչում Աստված բացահայտում է Իրեն որպես քնքուշ, ներող Հայր, ով հանդես է գալիս մեր կյանքի յուրաքանչյուր ոլորտում: Որպեսզի ճիշտ պատկերացում կազմենք Աստծո մասին, մենք կարիք ունենք ճանաչելու Նրան որպես Հայր:

> *Շատ կարևոր է սովորել ճանաչել, թե Ով է Աստված **իրականում**, և ոչ թե մտածել Նրա մասին համաչայն մեր **պատկերացման**:*

Մովսեսը Աստծո հայրության մասին խոր ճանաչողություն ուներ, և սա օգնեց նրան, որպեսզի հաստատուն մնա դժվար պահերին (Եբր. 11:27): Ահա թե ինչու էր Մովսեսը երգում.

> *«Նա չէ՞ քո հայրը, քո արարիչը, ով ստեղծեց և կերտեց քեզ»* (Բ Օր. 32:6 բ):

Բանալի համարներ

Նշումների համար

Երեմ. 3:19
Հովհ. 14:6 –11
Եփես. 1:17– 23
Մաղ. 2:10
Հակ. 1:17–18
Ղուկ. 15:11–32

ՄԱՍ 10.1
Հայր Աստված

Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված Աստծո երեք անձերն են: Նրանք միաբանության մեջ են, քանի որ մեկ են: Ուստի նրանք գործում են մեկության մեջ՝ միևնույն կամքով, մտքով և ցանկություններով: Աստված մեկ է՝ մի միություն (Բ Օր. 6:4), բայց այս միության մեջ կա նաև հոգնակիություն (Ծնն.1:26): Երեք տարբեր անձինք են, բայց մեկ են, որոնցից յուրաքանչյուրն ունի Իր դերը: Մեկ Աստված երեք անձերում հասկացությունը նկարագրելու համար կարող ենք նայել՝ ինչպես Աստված ստեղծեց մեզ: Արարվեցինք Աստծո պատկերով: Արարվեցինք մարմնով, հոգով և շնչով, յուրաքանչյուրը իր առանձնահատուկ ֆունկցիայով:

Եթե կենտրոնանանք Երրորդության միայն մեկի վրա, ոչ միայն մյուս երկուսին լավ չենք հասկանա, այլ չենք հասկանա նաև այդ մեկին:

Նշումների համար

ՄԱՍ 10.2
Աստծուն որպես Հայր ճանաչելու միջոցները

- Աստված հայտնում է Իրեն շատ ձևերով, օրինակ՝ մարգարեների միջոցով (Եբր. 1:1), արարման միջոցով և Իր Խոսքի՝ Աստվածաշնչի միջոցով:

- Հիսուսը երկրի վրա ներկայացրեց մեզ Աստծո հայրությունը, հատկապես Նրա սերը, մեկությունը և իշխանությունը (Հովհ. 14:6–11):

- Մեր մարմնավոր հայրը մեզ ցույց է տալիս Հայր Աստծո ոչ կատարյալ պատկերը, բայց Աստված է ողջ հայրության հեղինակը (Եփես. 3:14–15): Մեր երկրավոր հայրերը ***կարող են*** արտացոլել Հայր Աստծո միայն որոշ գծերը (Ղուկ. 11:11–13):

- Սուրբ Հոգին Հայր Աստծուց պարգև է մեզ, և Նա կհայտնի մեզ Հոր մասին (Հովհ. 14:26, Ա Կորնթ. 2:10–12):

Մարդը Հայր Աստծո մասին պատկերացումը ձեռք է բերում իր ֆիզիկական հոր և այլ իշխանություն ունեցող մարմինների հետ փոխհարաբերության արդյունքում: Նրանց կողմից ստեղծված տպավորությունները մեծ ազդեցություն են ունենում երկնավոր Հոր վերաբերյալ կարծիք կազմելու մեջ: Այդ պատճառով շատ կարևոր է, խնդրել Սուրբ Հոգուն՝ հայտնելու մեզ Աստծո հայրության իրական նկարագիրը:

ՄԱՍ 10.3
Աստված մեր կատարյալ Հայրն է

Նշումների համար

- Նա կարեկցող է (Ել. 34:6):
- Նա խորհրդական է (Սաղմ. 73:24):
- Նա պաշտպանում է (Սաղմ. 91, Հովհ. 10:27–29):
- Նա իմաստությամբ լի է (Ես. 11:2):
- Նա հանգստացնում է մեզ (Մատթ. 11:28–29):
- Նա համբերող է (Բ Պետ. 3:9–15):
- Նա սիրում է մեզ (Հովհ. 3:16):
- Նա մշակում և կերտում է (Հովհ. 15:1–2):
- Նա արդար է (Հովհ. 17:25):
- Նա կերտում և ստեղծում է մեզ (Հռովմ. 9:20–21):
- Նա հավիտենական է (Հռովմ. 16:26):
- Նա մխիթարում է (Բ Կորնթ. 1:3–4):
- Նա օրհնում է մեզ ամեն հոգևոր օրհնություններով (Եփես. 1:3):
- Նա գթասիրտ է և մեզ խաղաղություն է տալիս (Բ Տիմ. 1:2):
- Նա հավատարիմ է (Բ Տիմ. 2:3):
- Նա ուղղում և շտկում է մեզ (Եբր. 12:5–11):
- Նա անկողմնապահ է (Ա Պետ. 1:17):
- Նա ապահովում և հոգ է տանում մեր մասին (Ա Պետ. 5:7, Մատթ. 6:32–33):
- Նա ներում է (Ա Հովհ. 1:9):
- Նա Սուրբ է (Հայտ. 16:5):
- Նա ճշմարիտ է և արդար (Հայտ. 16:7):

Նշումների համար

ՄԱՍ 10. 4
Աստծո անունները Հին Կտակարանում

Հրեական մտածելակերպում անունը և էությունը հոմանիշներ են: Աստված Իր էությունը հայտնելու համար կիրառում է մարդկային հասկացողության անունների նշանակությունը: Հասկանալ Աստծո անունները նշանակում է հայտնություն ստանալ Աստծո մասին:

- **Էլ Էլիոն** – բարձրյալ Աստված, երկրի և երկնքի Արարիչ (Ծնն. 14:18, Բ Թագ. 22:14):
- **Էլշադայ** – ամենակարող և ամենազոր Աստված, Որը մշտապես բավարարում է Իր զավակների կարիքները (Ծնն.17:1):
- **Յահվե, Տեր կամ Եհովա** – Նա, որ միշտ կա, հաստատուն «ԵՍ ԵՄ»–ը, ուխտի Աստված (Ել. 3:15, Սաղմ. 83:18, Ես. 26:4):
- **Էլոհիմ** – Աստված, հզոր մեկը, որից պետք է երկյուղ ունենալ: Այս անունը ցույց է տալիս մեկ Աստծո հոգևակիությունը (եբրայերեն *Էլոհիմը Էլի* հոգնակին է): Աստված Ծնն. 1:26–ում ասաց. *«Մեր պատկերով և մեր նմանության պես մարդ շինենք»*: Սա վերաբերում է երկուսը, կամ ավելին՝ մեկի մեջ: (Ծնն. 1:1)
- **Եհովա Շամմահ** – Տերը այնտեղ է, նա մշտապես մեզ հետ է (Եզեկ. 48:35):
- **Եհովա Շալոմ** – Տերն է մեր խաղաղությունը (Դատ. 6:24):
- **Եհովա Հիրե** – Տերը կապահովի մեզ (Ծնն. 22:14):
- **Եհովա Նիսի** – Նա է մեր դրոշը և հաղթությունը (Ել. 17:15):
- **Եհովա Ցիդկենյու** – Տերը մեր արդարությունն է, Տերը, որ ծածկեց մեզ Իր արդարությամբ (Երեմ. 23:6, 33:16):
- **Եհովա Ռոֆե** ***(ռաֆա)*** – Տերը, որ բժշկում է մեզ (Ել.15:26):
- **Եհովա Ռո–հի** ***(ռաահ)*** – Տերը, մեզ սիրող, առաջնորդող Հովիվը (Սաղմ. 23:1):
- **Եհովա Մկադեշ** – Տերը, որ սրբացնում է մեզ (Ել. 31:13):

Նշումների համար

- **Եհովա Յաշա Գաալ** – մեր փրկիչն ու ազատագրող Տերը (Ես. 49:26, 60:16):
- **Ադոնայ** – Իմ Տեր (Ծնն. 15:2, Բ Օր. 9:26, Սաղմ. 5:15):
- **Թցուր** – Ժայռ (Ես. 44:8):

ՄԱՍ 10:5
Աստծո հայրությունը էական դեր ունի աշակերտության համար

Աստծուն որպես հայր ճանաչելը լիարժեք արդյունք կունենա մեր հավատքի և Նրա հետ փոխհարաբերության մեջ: Այն կավելացնի մեր հավատքը և ընդունակ կդարձնի հստակորեն հասկանալ հետևյալը.

- Աղոթք, և աղոթքի պատասխան (Մատթ. 7:11):
- Ստանալ Սուրբ Հոգին (Ղուկ. 11:13):
- Որդեգրություն (Հռովմ. 8:15, Ա Հովհ. 3:1):
- Փրկագնման ծրագիրը (Գաղ. 4:4–7):
- Աստծուն մոտենալը (Եփես. 2:18):
- Փառավորել Հորը՝ պտուղ բերելով (Հովհ. 15:8):

Աստծո սրտի վրա ազդեցություն ունի մարդու արձագանքը Իր հայրական սիրո նկատմամբ: Աստված անհատական Աստված է, ուստի Նա զգում է.

- Կարոտ (Ես. 30:18):
- Վիշտ (Ծնն. 6:6):
- Զայրույթ (Հայտ. 16:1):
- Տրտմություն (Երեմ. 8:21):
- Կարեկցանք (Մատթ. 9:36):
- Ուրախություն (Ղուկ. 15:22–24):
- Ցնծում է խնդությամբ (երգելով) (Սոփ. 3:17):

Նշումների համար

ՄԱՍ 10.6
Մեր երկնավոր Հոր սերը

Աստվածաշնչում մենք տեսնում ենք Իր ժողովրդի հանդեպ մեծ սերն ապացուցող Աստված.

> *«Քեզ քո Տեր Աստվածը պարապ, ինչպես մի մարդ իր զավակին է կրում, այն բոլոր ճանապարհներումը, որ գնացիք մինչև ձեր այստեղ գալը»* (Բ Օր. 1:31):
>
> *«Ես կարծում եմ, դու «Հայր» կկանչես»* (Երեմ. 3:19):
>
> *«Մարդի լարերով ես նրանց քաշեցի սիրո կապեր»* (Ովս.11 :1–4):
>
> *«Ինչ մեծ է Աստծո շնորհած սերը»* (Ա Հովհ.3:1):

Ստորև նշվածները վերաբերում են մեր առօրյա կյանքին.

- Նա միշտ կամենում է պատասխանել աղոթքներին (Երեմ. 33:3, Ես. 65:24, Մատթ. 7:11):
- Նա ուզում է, որ Իր զավակները լինենք (Երեմ. 3:19):
- Նա ուզում է ողորմություն ցուցաբերել մեր հանդեպ (Միք. 7:18):
- Նրա նպատակն է, որ մենք կյանք ունենանք, և որ այն լինի լիառատ (Հովհ. 10:10):
- Նա ուզում է ազատել մեզ վախից (Հովհ. 14:1, Սաղմ. 118:5–9):
- Նա ուզում է մարդուն հավիտենական բնակարան տալ (Հովհ. 14:2–3):
- Նա ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն (Ա Տիմ. 2:3–4):
- Նա ուզում է հոգալ մեր կարիքները (Ա Պետ. 5:7):

> *«Ով իմ անձը, մենակ լուռ մտիկ տուր Աստծուն, որովհետև Նրանից է իմ հույսը: Հիրավի, որ Նա է իմ վեմը, իմ փրկությունը, իմ ապավենը, ես չեմ շարժվի: Աստծո մոտ է իմ փրկությունը և փառքը, իմ զորության վեմն ու ապավենը Աստծո մոտ է: Հուսացեք Նրան ամեն ժամանակ, ով ժողովուրդներ, թափեցեք ձեր սրտերը Նրա առաջ: Աստված մեր ապավենն է.»*
>
> (Սաղմ. 62:5–8):

ՄԱՍ 10.7
Հաղորդակցություն Հայր Աստծո հետ

Նշումների համար

Դարերի ընթացքում Աստծո մեծագույն նպատակն ու ծրագիրն է եղել վերադարձնել մարդուն Իր հետ ամբողջական փոխհարաբերության մեջ: Ողջ պատմությունը Աստծո փրկության ծրագրի բացահայտումն է: Մեղքը կոտրեց Աստծո և մարդու միջև եղած փոխհարաբերությունը, բայց դեռ այդ ժամանակից էլ Աստծո փրկության ծրագիրը ընթացքի մեջ դրվեց: Աստված սիրում է աշխարհը, ձգտում է փրկել այն և վերականգնել կոտրված փոխհարաբերությունը (Հովհ. 3:16, Հռովմ. 5:8):

Հիսուսն ասաց.

> *«Եվ երկրիս վրա մեկին ձեզ* ***հայր*** *չկանչեք, որովհետև մեկն է ձեր Հայրը, որ երկնքում է»* (Մատթ. 23:9):

Սա բառացիորեն չի նշանակում, որ մենք մեր երկրավոր հայրերին չենք կարող հայր ասել, ուղղակի նրանք չունեն այնպիսի էություն ու կարողություն, որ կարողանան լինել այնպիսի հայրեր, ինչպիսին Աստված է ուզում, որ լինեն:

> *Մեր երկնավոր Հոր էությունը կատարյալ է.*
>
> *«...Հայրը, որի մեջ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա»* (Հակ. 1:17):

Աստծո կարողությունը անսահման է: Այս հույսի ներքո մեր երկնավոր հորը կարելի է ամբողջությամբ վստահել և ամբողջությամբ կախված լինել Նրա անսահման կարողությունից: Ուստի, Աստծո տված խոստումների հանդեպ վստահության պակաս չի կարող լինել.

> *«Եվ եթե չհավատանք, Նա հավատարիմ կմնայ, Նա չի կարող ուրանալ Իր անձը»* (Բ Տիմ. 2:13):
>
> *«Ասուված մարդ չէ, որ սուտ խոսի, ոչ էլ մարդի որդի, որ զղջա»* (Թվ. 23:19):

Նշումների համար

ՄԱՍ 10.8
Հայր–Որդի փոխհարաբերության օրհնությունները

- ***Որդի լինելու առավելությունը***
  (Հովհ. 1:11, Բ Կորնթ. 6:17–18, 7:1):
  Սուրբ Հոգին շատ նախանձախնդիր է մեր հանդեպ, որպեսզի պաշտպանի մեզ ցանկացած թշնամուց, ով ուզում է խլել մեր հարաբերությունը Հոր կամ Իր Որդու՝ Հիսուսի հետ (Հակ. 4:4–5):
- ***Որդիության հավատիությունը***
  (Հռովմ. 8:15–16, Գաղ. 4:6):
  Աստծո հոգին վկայություն է տալիս մեր հոգու հետ, որ մենք Աստծո որդիներ ենք, և այսպիսով՝ Հայր Աստված մեր Հայրն է:
- ***Որդիության ժառանգությունը***
  (Հռովմ. 8 :17):
  Աստված ուզում է, որ մենք մեր ժառանգության մասն ունենանք:
- ***Որդիական կարգապահությունը***
  (Եբր.12: 7–11):
  Հայրը սիրում է մեզ և խրատում որպես Իր զավակներ: Սա մեզ համար է, որպեսզի կարողանանք բաժնեկցել Նրա սրբությունը:
- ***Մեր Հոր սերը***
  (Հովհ. 16:26, 27):
  Հայրը սիրում է մեզ: Մենք կարող ենք աղոթել Նրան վստահությամբ, և Նա կպատասխանի մեր աղոթքներին:
- ***Հոր ապահովումը***
  (Մատթ. 6:8–26 և 30–34, Հովհ. 14:2):
  Հայրը ապահովում է մեր ամենօրյա կարիքները: Մեր պարտավորությունն է առաջին հերթին փնտրել Իր արքայությունը և արդարությունը:
- ***Հոր պաշտպանությունը***
  (Հովհ. 10:28–30, Հովհ. 13:7):
  Ոչ ոք մեզ չի կարող դուրս հանել Հոր ձեռքերի միջից: Մենք անվտանգ ենք Նրա մեջ:
- ***Հոր բարեհոգությունը***
  (Ղուկ. 12:32, Մատթ. 7:11):
  Հայրը զավակների հետ ուզում է բաժնեկցել Իր ողջ հարստությունը և նույնիսկ Իր թագավորությունը:

Ամփոփում

Նշումների համար

Այսօր շատ քրիստոնյաներ ապրում են Աստծո դատաստանի կրոնական սպառնալիքի ներքո: Նրանց ասել են, որ Աստված նրանց դեմ է և միշտ հետևում է ինչ–որ կերպ պատժելու և անարգելու համար: Աստված ատում է մեղքը, բայց ոչ մեղավորին: Եթե Աստված, սիրելով մեղավորին, Իրեն հասանելի է դարձրել նրա համար, ապա որքան առավել Իր զավակների համար, որոնք ջանում են Խոսքի հնազանդության մեջ քայլել: Երբ եկանք Հիսուսի մոտ, Նա ընդունեց և սիրեց մեզ, չնայած մեղավոր էինք (Հռովմ. 5:8): Ինչևէ, Նա չթողեց մեզ այդպես, այլ մաքրեց Իր թափած արյունով: Նա մեզ Իր թագավորության մեջ քահանաներ դարձրեց՝ ծառայելու Իր Աստծուն և Հորը (Հայտ. 1:5–6): Նա ընտրել է մեզ, որ պատմենք Իր արած մեծամեծ գործերի մասին (Ա Պետ. 2:9–16):

Անգամ երբ ամեն ինչ խառնում ենք իրար, մեղք ենք գործում, և բաներ անում, որոնք չեն հաճեցնում Աստծուն՝ մեր Հորը, Հիսուսի դիրքը միշտ բարեխոս լինելն է: Նրա ծառայությունը, որպես քահանայապետ և միջնորդ, ընդունակ է միշտ մեզ պահել սիրող Հոր հետ փոխհարաբերության մեջ (Ա Հովհ. 1:9, Հովհ. 17–20):

> *«Ուրեմն համարձակությունով մոտենանք շնորհքի աթոռին, որ ողորմություն ընդունենք և շնորհք գտնենք պատշաճ ժամանակին օգնելու»* (Եբր. 4:16):

Մենք հրավիրված ենք համարձակությամբ մոտենալ Հոր գահին: Նրա սերն ու շնորհքը մեզ արտոնում են ինչպես թագավորներ Իրեն մոտենալ, և ոչ մուրացկաններ: Ուշադրությունն դարձրու, որ մենք հրավիրված ենք ողորմություն ստանալու և ոչ թե հայթայթելու:

Ա Հովհ. 4.18–ն ասում է.

> *«Սիրո մեջ վախ չկա: Բայց կատարյալ սերը հեռու է վանում վախը»:*

Մենք կարիք ունենք դնել մեր բոլոր վախերը, հույզերը և կասկածները մեր ամենակարող Հոր ձեռքերի մեջ: Նա սիրում է մեզ որպես Իր զավակներ և ժառանգներ և երբեք հուսախաբ չի անի: Նա լավագույնն է ցանկանում մեզ համար. որ մենք հասունանաք և ճանաչենք Իրեն ավելի: Մենք կարիք ունենք վստահելու մեր երկնավոր Հորը և ամեն ինչ Իրեն հանձնելու:

Նշումների համար

Ամփոփում և կիրառություններ

1. Որպես Հիսուսի աշակերտներ, որպեսզի Աստծո վերաբերյալ հավասարակշռված պատկերացում ունենանք, կարիք ունենք ճանաչել Երրորդության երեք անձանց՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:
2. Մեր երկնավոր Հայրը հայրության կատարյալ օրինակն է (Մատթ. 5:48):
3. Աստծուն որպես Հայր ճանաչելը մեր հավատքի կյանքի հիմքն է:
4. Աստված մեզ սիրող Հայրն է: Որպեսզի ուրախանանք մեր հոր հետ ունեցած փոխհարաբերությունով, պետք է սովորենք վստահել Իրեն և արձագանքել Իր սկզբունքներին, Խոսքերին և իշխանությանը:
5. Թե ով է մեր երկնավոր Հայրը և ինչ նպատակ ունի մեզ համար, եկ արձագանքենք նրան.
   - Մեր սիրով (Հովհ. 14:27):
   - Երկրպագությամբ (Հովհ. 4:23–24):
   - Հնազանդությամբ (Հովհ. 14:15, Ա Պետ. 1:12–17, Հռովմ. 6:16–18)

Հետևյալ աստվածաշնչյան ուսումնասիրությունը՝ *Հնազանդություն* թեմայով, ցույց կտա դրա կարևորությունը Հիսուսի աշակերտի համար:

Աստվածաշնչյան ուսումնասիրություն
Հնազանդություն

Նշումների համար

Այս ուսումնասիրությունը Հիսուսի աշակերտի կյանքի համար կսահմանի մի կարևոր սկզբունք՝ ***հնազանդությունը***: Այսօր շատերը բացասաբար են վերաբերվում հնազանդությանը՝ այն համարելով որպես ազատության արգելք, բայց իրականում, ընդհակառակը, հնազանդությունն ազատում է մեզ և տալիս խաղաղության և ուրախության խոր զգացում:

Նախորդ բաժիններում ուսումնասիրեցինք *Նորոգված միտք և Ապրծո կամքը իմ կյանքի համար* թեմաները: Սկզբունքները, որ դիտարկեցինք այնտեղ, ոչ մի օրհնություն չեն բերի, եթե մենք պատրաստ չենք հնազանդության: Ահա այստեղ է, որ մենք գտնում ենք մեր օրհնությունն ու պայքարը:

Բացահայտելով, որ Աստված որդեգրել է մեզ՝ ուրախանում ենք: Հայր Աստծո մեծությունը ճանաչելը մեզ տալիս է ապահովության խոր զգացում: Հարցը կայանում է նրանում, թե ***արդյո՞ք հնազանդ ենք այս ամենակարող և սիրող Հորը, և արդյո՞ք, որպես Նրա զավակներ, հավատում ու վստահում ենք Իրեն***:

Հավատքը և հնազանդությունը քայլում են միասին: Աստվածաշունչը սկզբից մինչև վերջ պարզ է խոսում այս մասին:

Այս ուսուցման ժամանակ ուշադրություն կդարձնենք

- Հնազանդությանը Հին Կտակարանում:
- Հնազանդությանը Նոր Կտակարանում:
- Հիսուսի հնազանդությանը:
- Հետևել Հիսուսին հնազանդությամբ:

1. Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով: ***Ադամն ու Եվան*** քայլում էին Աստծո հետ մաքուր փոխհարաբերությամբ: Ի՞նչ սկզբունքներ ենք գտնում Ծնն. 2:16–17–ում, որոնք այդ փոխհարաբերության հիմքն էին հանդիսանում.

   _____

   _____

Նշումների համար

Ո՞րն էր նրանց անհնազանդության հետևանքը (տե՛ս նաև Ծնն. 3:23–24).

_____

_____

_____

2. Ծննդոց 6:8–9 և 22–ում կարդում ենք ***Նոյի*** պատմությունը: Ինչպե՞ս էր ապրում Նոյը.

_____

_____

_____

Ծնն. 7:1–16–ում Նոյը օրհնվեց իր հնազանդության շնորհիվ (տե՛ս նաև Եբր. 11:7) Նկարագրի՛ր սա քո բառերով.

_____

_____

_____

3. Կարդա՛ Եբր.11:8–ը և նկարագրի՛ր, թե ինչ էր նշանակում. ***Աբրահամը*** հնազանդվեց Աստծուն հավատքով:

_____

_____

_____

Աստծուն հնազանդվելը միշտ օրհնություն է բերում: Համաձայն Ծնն. 22:16–18–ի՝ ի՞նչ օրհնությունների պատճառ դարձավ Աբրահամն իր հնազանդությամբ:

- Աբրահամի համար _____

_____

- Բոլոր ազգերի համար _____

_____

Աստված պարգևատրում է հնազանդությունը, որովհետև այն Իրեն հաճելի է: Միայն հնազանդության միջոցով կարելի է լինել օրհնված ամբողջ աշխարհի համար:

4. Աստված խոսեց Մովսեսի հետ Ել. 19:5–6–ում: Լրացրո՛ւ բաց թողնված տեղերը.

«Եվ հիմա եթե _____

_____

այն ժամանակ _____

_____

ամեն ազգերից, որովհետև Իմն է բոլոր երկիրը:

Եվ դուք Ինձ համար _____

_____ կլինեք»:

Ել. 38–40–ում 19 անգամ նշված է, *որ «նրանք արեցին, ինչպես պատվիրեց Աստված Մովսեսին»*: Կարդա՛ Ել. 40:34–35–ը և նկարագրի՛ր այն օրհնությունը, որ նրանք ստացան հնազանդության շնորհիվ.

_____

_____

_____

Աստված ցանկանում է ապրել հնազանդ մարդկանց մեջ:

5. Նոր Կտակարանում նույնպես տեսնում ենք Աստծուն հնազանդվելու կարևորության շեշտը: ***Հիսուսն*** Իր հնազանդությամբ ցույց տվեց, որ ամբողջապես կախված էր Հայր Աստծուց: Կարդա՛ հետևյալ համարները և լրացրո՛ւ բաց թողած տեղերը.

- Հովհ. 5:30. «Ես ինձանից _____

  _____

  այլ Ինձ ուղարկող Հոր կամքը»:

- Եբր. 10:7. «Այն ժամանակ ասացի, թե ահա գալիս եմ

  _____»:

Ի՞նչ է նշանակում Հիսուսի հնազանդությունը մեզ համար (Եբր.10:10).

_____

_____

Նշումների համար

Նշումների համար

Սրբանալ այլ կերպ նշանակում է.

- Բաժնեկցել Իր փառքը:
- Ստանալ Նրա հնազանդությունը, որ մենք նույնպես դառնանք հնազանդ:

6. Աշակերտները նույնպես շեշտադրում էին հնազանդությունը:

- Պետրոսը (Գ. Առ. 5:29) _____
_____
- Պողոսը (Հռովմ. 15:18–19) _____
_____
- Հակոբոսը (Հակ. 2:17, 21, 26) _____
_____
- Պետրոսը (Ա Պետ. 1:14–15) _____
_____
- Հովհաննեսը (Ա Հովհ. 2:4–6) _____
_____

7. Ի՞նչ էր նշանակում հնազանդությունը Հիսուսի համար: Համապատասխանեցրո՛ւ նկարագրությունները սուրբգրային ճիշտ համարի հետ.

ա) ☐ Սաղմ. 40:8, Եբր. 10:7		1. Հիսուսի համար հնազանդությունը կյանքի սկզբունք էր:
բ) ☐ Փիլիպ. 2:3–5		2. Հնազանդ լինելը Նրան ուրախություն էր պարգևում:
գ) ☐ Հովհ. 5:30		3. Նա միշտ պատրաստ էր անելու Աստծո կամքը:
դ) ☐ Հովհ. 8:29		4. Հիսուսը հնազանդ եղավ մինչև մահ:
ե) ☐ Հովհ. 6:38		5. Այդ հնազանդությունը գալիս էր խոր խոնարհությունից:
զ) ☐ Փիլիպ. 2:8		6. Հիսուսը գիտեր, որ իր հնազանդությունը հաճելի էր Հորը:

8. Առանց հնազանդության մենք չենք կարող փառավորել Աստծուն: Հիսուսը փառավորեց Հորը՝ երկրի վրա հնազանդության մեջ ապրելով (Հովհ. 17:4): Աստվածաշունչը մեզ բազմիցս զգուշացնում է անհնազանդության վտանգի մասին, որը միայն ապստամբության տեսքով չի լինում, այլ նաև անտարբերության: Այդպիսի մի օրինակ կարելի է տեսնել ***Սավուղի*** կյանքում:

Նշումների համար

ա) Կարդա՛ Ա Թագ 13:5–12–ը, երբ Սավուղը պետք է սպասեր, որ Սամվելը գար և զոհը մատուցեր: Սամվելը ասել էր, որ այնտեղ կլինի յոթ օրից, բայց մի փոքր ուշացավ: Սավուղը չհամբերեց և զոհն ինքը մատուցեց: Նա անհնազանդ գտնվեց: Կարդա՛ 13 և 14 համարները և նկարագրի՛ր հետևանքները.

_____

_____

բ) Կարդա՛ Ա Թագ.15:3–9: Տերը հրամայեց Սավուղին ամեն ինչ ոչնչացնել, սակայն Սավուղը պահեց Ագագին և կենդանիներից լավագույններին (9–րդ Խոսքը):

- Ո՞րն էր Սավուղի արձագանքը, երբ Սամուելը եկավ նրա մոտ (13–րդ Խոսքը):

_____

_____

- Ո՞րն էր Սավուղի արձագանքը (14–րդ Խոսքը):

_____

_____

գ) 18–րդ և 19–րդ Խոսքերում Սամուելը հարցնում է Սավուղին. *«Ինչո՞ւ չհնազանդվեցիր Տիրոջը»*: Ո՞րն է Սավուղի պատասխանը 20–րդ Խոսքում:

_____

_____

դ) Սավուղի խիղճը մեղադրում է իրեն, ազնիվ և անկեղծ լինելու և անհնազանդությունը խոստովանելու փոխարեն նա սկսում է պատճառաբանել: Նա պաշտպանում է իրեն՝ ***մասամբ հնազանդվելով***: Անտարբեր լինելը վտանգավոր է. միայն մասամբ հնազանդվել և հետո փորձել հանգստացնել խղճմտանքը, դա չի գոհացնում Աստծուն:

Նշումների համար

- 22 և 23 Խոսքերն ասում են. (լրացրո՛ւ բաց թողած տեղերը)

«...ահա, հնազանդությունը _____,

և ակամա դնելը _____:

Որովհետև ապստամբությունը _____ *պես է,*

և անհնազանդությունը _____

_____ *պես է:*

9. ***Պողոսի*** կյանքը ցույց է տալիս մեկ այլ օրինակ: Պողոսը իր արդարությամբ կարծում էր, թե հնազանդվում է Աստծուն, բայց իրականում նա հալածում էր Հիսուսին: Պողոսն ***իրեն համարում էր հնազանդ***, բայց Հիսուսը, պարզորոշ կերպով ցույց տվեց նրան իր անհնազանդությունը:

- Ո՞րն էր նրա արձագանքը (19–րդ Խոսքը).

_____

_____

_____

Պողոսը ցանկանում էր շտկվել և հնազանդ լինել:

Մյուս հրեաները իրենց անմեղ ձևացրին, բայց շարունակեցին անհնազանդությունը (Գործք 3:17): Նրանք ուղղվելու ցանկություն չունեին: Ստեփանոսը նրանց համար պարզ դարձրեց այդ համառ անհնազանդության վտանգը:

- Կարդա՛ Գ. Առ. 7:51 և նկարագրի՛ր վտանգը.

_____

_____

_____

10. Հնազանդությունը մեր փրկագնման հիմքն է: Եբր. 5:8–ը Հիսուսի մասին հետևյալն է ասում.

«Թեև Որդի էր, այն չարչարանքներից ***հնազանդություն սովորեց****»:*

Նշումների համար

Հնազանդության գաղտնիքը հոգևոր խոնարհությունն է հոր նկատմամբ: Նման հնազանդությունը բերում է պտղաբերություն.

- Լրացրո՛ւ շարունակությունը՝ Երր.5:7–ը կարդալով.

և լսվեց Իր _____

_____:

- Կարդա՛ Երր. 5:9–ը. Ի՞նչ կատարվեց այն մարդկանց համար, ովքեր ընտրեցին հնազանդվել Իրեն.

_____

_____

_____

11. Աշակերտն ուզում է հնազանդվել Հիսուսին: Հիսուսը ցանկանում է սովորեցնել մեզ, թե ինչպես հնազանդվել: Ըստ հետևյալ սուրբգրային համարների՝ ո՞րն է մեր պատասխանատվության բաժինը այս հարցում.

ա) Հռովմ. 12:1 _____

բ) Հռովմ. 12:2 ա _____

գ) Հռովմ. 12:2բ _____

դ) Հռովմ. 12:2գ _____

ե) Գ. Առ. 24:16 _____

զ) Երր. 11:8 _____

12. Ո՞ ր են է Աստծո խոստմունքը այն մարդկանց համար, ովքեր հնազանդվում են Իրեն (Գ. Առ. 5:32).

_____

_____

_____

13. Այսպիսի հնազանդության պատճառը օրենքը չէ, այլ շնորհքն է (Հռովմ. 6:14)

Նշումների համար

- Ըստ Եզեկ. 36:27՝ ինչպես կարող ենք հնազանդվել Աստծուն.

_____

_____

_____

- Ո՞րը կլինի մեր սուրբ և մաքուր շարժառիթը (Հռվի. 14:15, Բ Կորնթ. 5:14 –15).

Հնազանդությունը միշտ սիրո արտահայտություն է, և ***այդ անելով՝ մենք ցույց ենք տալիս մեր սերը Հիսուսի նկատմամբ***:

14. Ի՞նչը գրավեց քեզ այս աստվածաշնչյան ուսումնասիրության մեջ.

_____

_____

_____

Պատասխաններ

Նշումների համար

1. Հնազանդվել Աստծո պատվիրանին:
   Անհնազանդության հետևանքը մեղքն է, Աստծո փառքից ընկնելը և Աստծո հետ ունեցած փոխհարաբերության խափանումը. ոչ թե օրհնությունը, այլ անեծքը:

2. Նոյը քայլում էր Աստծո հետ և ամեն ինչ արեց այնպես, ինչպես Աստված էր պատվիրել:
   Նոյի հնազանդության արդյունքում փրկվեց իր ընտանիքը (ողջ մարդկությունը) և կենդանական աշխարհը:

3. Հավատքով Աբրահամը թողեց իր երկիրը և գնաց այն վայրը, որն Աստված իրեն էր տալու որպես ժառանգություն.
   - Աբրահամի համար. նրա սերունդները բազմաթիվ կլինեին և կհաղթեին իրենց թշնամիներին:
   - Ազգերի համար. բոլոր ազգերը կօրհնվեին իր ժառանգի շնորհիվ (եկող Մեսիան):

4. Տե՛ս Աստվածաշունչը:
   Աստծո փառքը լցրեց խորանը: Աստված եկավ բնակվելու իր ժողովրդի մեջ:

5. Տե՛ս Աստվածաշունչը:
   Տե՛ս Աստվածաշունչը:
   Դա նշանակում է, որ Հիսուսի հնազանդության արդյունքում մենք ազատագրվել, սրբացել և այժմ ազատ ենք՝ կատարելու Աստծո կամքը:

6. - *Պետրոսը.* նախևառաջ հնազանդվեց Աստծուն:
   - *Պողոսը.* նա քայլում էր Սուրբ Հոգու զորությամբ, և նրան ուղեկցում էին նշաններն ու հրաշքները: Նրա նպատակը՝ անհավատներին առաջնորդել Աստծո կամքը կատարելու:
   - *Հակոբոսը.* հավատքն առանց գործերի մեռած է:
   - *Պետրոսը.* որպես հնազանդ զավակներ՝ ենթարկեք ձեզ Աստծո կամքին
   - *Հովհաննեսը.* աշակերտները գիտեն Աստծուն և ցանկանում են հնազանդվել նրան:

Նշումների համար

7. ա) 2 բ) 5 գ) 6
դ) 3 ե) 1 զ) 4

8. ա) Անհնազանդության պատճառով թագավորությունը վերցվեց Սավուղի սերնդից, և նրա սերունդները կորցրեցին գահի իրավունքը:
բ) • *Տիրոջ Խոսքը կատարեցի:*
• *Ապա այս ոչխարների ձայնը ի՞նչ է, որ գալիս է ականջիս:*
գ) *Տիրոջ ձայնին լսեցի:*
դ) Տե՛ս Ա Թագ. 14. 22 և 23 համարները:

9. • Պողոսը հնազանդվեց՝ նա կամենում էր շտկվել և հարցրեց Հիսուսին՝ ինչ անել (Գ. Առ. 22:10)
• Հրեա առաջնորդները չէին ցանկանում ուղղվել, ուստիև մերժեցին Սուրբ Հոգուն:

10. • Բարեպաշտության համար:
• Նա դարձավ հավիտենական փրկության աղբյուրը այն բոլորի համար, ովքեր հնազանդվում են Իրեն:

11. ա) Կատարյալ և անշահախնդիր նվիրվել (հնազանդության փափագ):
բ) Թույլ չտալ, որ այս աշխարհի սկզբունքները, գայթակղությունները և իրավիճակները բռնեն քեզ (սրանք կարող են խոչընդոտնել հնազանդության գործում):
գ) Ունենալ նորոգված միտք, կերակրել այն Աստծո սկզբունքներով և ոգով:
դ) Ճանաչել Աստծո կամքը (նաև տե՛ս աստվածաշնչյան ուսումնասիրությունը):
ե) Լսել խղճի ձայնը:
զ Հնազանդվել հավատքով, լինել վստահ, և Աստված կառաջնորդի ու կզորացնի:

12. Սուրբ Հոգին

13. • Սուրբ Հոգին ստանալու միջոցով:
• Սեր, Հիսուսին հնազանդվելով՝ պատրաստակամություն ցուցաբերել:

14. Անձնական նկատառումներ: